


Պ Ի Ո Ս Ժ Բ.

Ուրախութեամբ եւ վստահութեամբ լեցուեցան հոգիները երբ վատիկան հաղորդեց Ս. Պետրոսի աթոռին վրայ նորընտիր Քահանայապետի անունը՝ Եւգինէոս Պաշեւլի — Պիոս ԺԲ: Պաշեւլի վատիկանի վարչական մարմնոյն մէջ ամէնէն արտակարկառ դէմքն էր. հանգուցեալ Քահանայապետը լիուլի եւ արդար վստահութեամբ Անոր յանձնած էր ամէնէն փափուկ ու պատասխանատու հարցերու լուծումը, եւ Պաշեւլի կատարեալ ձեռնհասութեամբ զանոնք Եկեղեցւոյ մեծագոյն շահերուն համաձայն ի գլուխ հանած էր: Արդէն ամենուրեք բարձրագոյն վստահութեան արտայայտութիւն նկատուեցաւ Կաթողիկէ աշխարհի կողմէ Նորին Սրբութեան այս աննման արագ ընտրութիւնը: Այսօր երբ քաղաքական մթնոլորտը այնպէս մութ ու մռայլ է եւ ժողովուրդներու ճակատագիրը անորոշ՝ Պետրոսի գահին վրայ արթուն ու կորովի Առաջնորդի մը պէտքը այնքան աւելի մեծ պահանջը էր փրկելու համար մարդկութիւնը այս ալեկոծ տարիներէն: Ու վստահութեամբ եւ ինքնագիտակից կ'ուզուին միլիոնաւորներու աչքերը դէպի վատիկան՝ համոզուած թէ Աստուծոյ Եկեղեցին իբր անասան ժայռ մը պիտի ըլլայ — ինչպէս միշտ պատմութեան ընթացքին — խաղաղութեան ու հոգիներու հասկացողութեան մեծագոյն ազդակը:

Եւգինէոս Պաշեւլի ծնած է Հոռոմ, 2 Մարտ 1876, ազնուական ընտանիքէ. հայրը փաստաբան եւ իրաւագէտ էր. անկէ ժառանգած է անտարակոյս Եւգինէոս խօսելու ձիրքը, որ Ն. Սրբութեան հմայքներէն մին է: Եւգինէոս Պաշեւլի կը նուիրուի քահանայական կոչման, կը ձեռնադրուի 2 Ապրիլ 1899ին: Մասնաւոր նախասիրութիւն ունէր եկեղեցական ու քաղաքական իրաւաբանութեան, զոր կ'աւարտէ լաւագոյն վկայականներով: Այս գեղեցիկ պատրաստութիւններով կը կոչուի իւր գործակցութիւնը բերելու եկեղեցական ժողովներու մէջ. միաժամանակ կը դասաւանդէ: 1917ին, պատերազմի շրջանին կը կարգուի Առաքելական Նուիրակ Պալարիոյ եւ նոյն տարին կ'ընդունի Եպիսկոպոսական օժումը: 1929ին կը փոխադրուի Բերլին: Պաշեւլի գերման հոգեխօսութեան ու ժամանակի պայմաններուն տեղեակ՝ կը յաջողի գոյացանել Հոռոմայ ու Բերլինի միջեւ համաձայնագիր մը, որով կը հարթուին շատ մը առկախ խնդիրներ: Պիոս ԺԱ. գնահատելով իւր Նուիրակին արժանիքները՝ 16 Նոյեմբեր 1929ին Ծիրանաւոր կ'անուանէ



զինքը եւ յաջորդ տարին կը յանձնէ իրեն Վատիկանի Արտաքին Գործոց վարչութիւնը: Իբր Գարտուղար Վատիկանի ունեցաւ Պա- չէլլի դիւանագիտական փայլուն յաջողութիւններ զանազան պե- տութիւններու քով: Դարձեալ ինքն էր որ քահանայապետական պատգամը կը տանէր Ս. Հաղորդութեան Ժողովներու՝ իւր անձին հմայքով փայլ մը եւս աւելցնելով անոնց: Մտաւոր կարողու- թիւնը, համոզելու բացառիկ տուրքը, լեզուներու ճիրքը, մանա- ւանդ քահանայական սրբութիւնը, որ իւր մերձաւորութենէն կ'ար- տաշնչէ, գրաւականներ են, որոնք երբեք չեն վրիպած: Ուստի երբ 2 Մարտ 1939ին ընտրուեցաւ կառավարելու Կաթողիկէ Աշխարհը, բոլոր սրտերը վստահութեամբ ուղղուեցան դէպի իրենց Հօր՝ խոր համոզումով թէ նա է Աստուծոյ Մարդը:

Որդիական վստահութեամբ ու սիրով մենք եւս կը փութանք յայտնել մեր ուրախութիւնը նորընտիր Հօր, խնդրելով իր առատ հայրական օրհնութիւնը Միաբանութեանս ու ամբողջ Ազգին վրայ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱԳԵՄԻ

Հայ Եկեղեցին ալ ունեցաւ իւր սուգը, որուն մասնակցեցաւ ամբողջ ազգը: Անգամ մը եւս մահը կը խլէր արդիւնաշատ կեանք մը՝ գեղեցիկ անցեալով ու Ժպտուն ապագայով, կեանք մը, որ կը խորտակուէր կէս ճամբան՝ թերաւարտ թողած շատ ծրագիրներ: Ամենապատիւ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշական տարւոյս Փետ- րուար 10ին կը վախճանէր սուգերու մէջ թողլով իւր Միաբանու- թիւնը: Գուշական Սրբազան Հայ Եկեղեցւոյ կարկառուն դէմքե- րէն մին էր շատ տեսակէտէ. անոր գործերը բազմաթիւ երեսակ- ներով կը ներկայացնեն ու կ'արդարացնեն այն լայն յոյսն ու վստա- հութիւնը, զոր Հայ Եկեղեցին անոր անձին հանդէպ տածած է:

Թորգոմ Արք. Գուշական, ծնած Պարտիզակ 14 Մեպտ. 1874, ուսումնական առաջին քայլերը կ'առնէ Դուբեան Ս. Ի առաջնոր- դութեան տակ. Արմաշու դպրեվանքին մէջ Օրմանեանի վերա- տեսչութեան օրով կ'ընդունի իւր կոչման ուսումները եւ 1896ին կը բարձրանայ քահանայական աստիճանին: 1907ին կը գտնենք զինքը Սեբաստիոյ իբր առաջնորդ. 1914ին կը կարգուի Եգիպտոսի տեղապահ ու քիչ ետք Առաջնորդ: Մեծ Պատերազմի տարիներուն

կը շրջի նուիրակի պաշտօնով Հնդկաստանի ու շրջակայից հայ գա- ղութները, 1929ին վարչական ծրագրով կ'այցելէ Եւրոպական հայաշատ կենդրոնները՝ նպատակն էր կազմակերպել զանոնք: 1931ին կը կոչուի յաջորդելու Երուսաղեմի պատրիարքական աթոռին վրայ իւր մեծ Ուսուցչին՝ Դուբեան Սրբազանին:

Այսպէս իբրեւ հանրային գործիչ Գուշական Հայ Ժողովուրդի կեանքին մէջ ոչ աննշան դեր մը ունեցած է՝ Թուրքիա, Հնդկաս- տան, Եգիպտոս ու Պաղեստին: Ազգային շունչն ու ոգին անոր նկարագրին էական մէկ գիծն էր. այդ գիծը՝ հիմքը կը կազմէ անոր գործունէութեան համապատկերին մէջ, ուր կրօնական երանգը աւելի շեշտուած կը գտնենք: Յիշենք երկերէն Նարեկի աշխարհաբար յաջող թարգմանութիւնը, «Աւետարանի շաղկէն»- Խրիմեան Հայրիկի եւ Դուբեան Սրբազանի վրայ ուսումնասիրու- թիւններ կենսագրական նօթերով. Եգիպտոսի հայ եկեղեցիներու մասին գրքոյկ մը. մանրամասն Օրագրութիւն Պատերազմի շրջա- նէն եւն, ի մէջ այլոց Սուրբ Նշանի (Սեբաստիա) ձեռագրացու- ցակը, մասնակի լոյս տեսած «Հանդէս Ամսօրեայ»ի էջերուն մէջ: Ունի նաեւ կարգ մը թարգմանութիւններ մասնաւորաբար Փրան- սական գրականութենէ: Անտիպ կը մնայ ընդարձակ երկասիրու- թիւն մը Հնդկահայոց մասին: Երուսաղեմի աթոռը բարձրանալէն ի վեր կը վարէր ձեռնհասօրէն Սիոնի խմբագրութիւնը: Գուշա- կեան օժտուած է համոզիչ ոճով եւ հստորական շեշտով:

Գրական եւ վարչական արժանիքներուն հետ պէտք է յիշա- տակել նաեւ հանգուցեալ պատրիարքի տնտեսական մեծ հասկա- ցողութիւնը, որով կրցաւ փրկել Երուսաղեմի կալուածներն ու ապահովել մեծ մասով անոնց ապագան:

Վերակոչելով Հանգուցեալի յիշատակը՝ կը խոնարհինք անոր շիրմին առաջ, անվերապահ մասնակցելով հայութեան սուգին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի